ՀԱՅԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ *ՄՆԱՑՈՐԴԱՑ* ՎԷՊՈՒՄ

ՆԱՆԷ ՄՈՎՍԻՍԵԱՆ
monane@yandex.ru

Ազգային ինքնութեան գիտակցական ձեւաւորումը, ի թիւս այլ գործօնների, ենթադրում է լեզուական, մշակութային, հոգեկերտուածքային, կրօնական գործօնների առկայութիւն: Դարերի ընթացքում վերաձեւաւորուող հայկական ինքնութիւնը վերոյիշեալ գործօնների տարբեր համեմատութիւններով յարատեւ վերաձուլումն է, ինչի միջոցով, ազգային ինքնութիւնների խճանկարում, հայկականը տարբերւում է գոյութիւն ունեցող այլ ինքնութիւններից: Ո՞վ է հայը եւ որո՞նք են հայի ինքնութեան առանձնայատկութիւնները, համամարդկային ընդհանրութիւնները, բացթողումները:

Հայոց պատմութեան ամբողջ ընթացքում հետազօտողները ձեւակերպել են վերոնշեալ հիմնահարցը, պատասխանել կամ՝ ոչ, սակայն հիմնահարցի էութիւնը, թաքնուած ներիմաստներն ակնյայտօրէն ներկայացուած են Յակոբ Օշականի[1] *Մնացորդաց*[2] վէպում: Ուստի, հայկական ինքնութեան բարդ համակարգն իր ամբողջութեան մէջ դիտարկելու համար անհրաժեշտ է անդրադառնալ Օշականի նշած այն յատկութիւններին, որոնք բնորոշ են բուն հայկական ինքնութեանը: Այսպիսով, նախ առանձնացնենք հայի ինքնութեանը բնորոշ առաջին, բնազանցական յատկութիւնը:

Աշխարհի պատկերը ստեղծելիս իւրաքանչիւր ազգ օգտագործում է որոշակի իմացաբանական մեթոդ, որով էլ իրականութեան նշաններին տալիս է իմաստ, ինչն ազդում է ազգի արժէհամակարգի, սովորոյթների, մշակոյթի ձեւաւորման վրայ: Ըստ այդմ էլ կարելի է ինքնութիւնների խճանկարում տարբերակել ազգերն իրենց նմանութիւններով եւ տարբերութիւններով:

Աշխարհաճանաչման եւ դրանում իր դերն ու տեղն ունենալու հարցում Օշականի մօտեցմամբ հայն առաջնորդուել է նախեւառաջ զգայություններով: Այս է վկայում Օշականի հետեւեալ պնդումը. «*Սուտ չէ մտածումը, որ մեր ողբերգութեանց հնոցը կը զեփեղէ մեր զգայութեան անդունդին խորը*»[3]: Զգայութիւններով առաջնորդուող աշխարհի ճանաչողութեան արդիւնքն է այն, որ հայն աշխարհի պատկերը ստեղծել է իբրեւ արուեստագէտ, ինչն ենթադրում է երեւոյթների եւ իրերի ճանաչողութիւն իրենց բուն էութեան մէջ, աշխարհն անմիջականօրէն, առանց միջնորդի՝ զգայութիւններով ճանաչելու կամքը: Այս երեւոյթը արտայայտուել է նախեւառաջ երաժշտութեան մէջ: Գուցէ

առաջնորդուելով այս տրամաբանութեամբ Օշականը, որպէս հայկական ինքնութեան արտացոլանք, կրօնից աւելի շեշտում է ժողովրդի յոյզերը, աշխարհայեացքն արտայայտող հայկական երաժշտութիւնը՝ նշելով. «*Հելլէն քաղաքակրթութիւնը, Նիցշէին կարծիքով, ծնունդ է կրօնական երգերու...*,- ապա շարունակում՝- *Անշուշտ, թուրքերուն դեռ կը պակսի արուեստագէտը, որ քանի մը կարկառուն քանդակներով սեւեռէր մէկ-երկու երեսները իրենց հոգիին, ինչպէս մերը ըրած են մեր շարականները ու նոր օրերու մեր գեղջուկ երգերը*»[4]:

Երաժշտութեան ստեղծումը, ըստ էութեան, տուեալ ժողովրդի յոյզերի ամբողջական արտացոլումն է. հայը զգացմունքային է, ռոմանտիկ, եւ ինչպէս նկատում է Օշականը, հայը յայտնի է եկեղեցական շարականներով, որն էլ ինչ-որ չափով արտացոլել է հայի հոգեւոր ճանաչողութեամբ տրուած աշխարհի պատկերը: Ինչպէս փաստում է Նիցշէն. «*Ժողովրդական երգն աշխարհի երաժշտական պատկերն է... իսկ երաժշտութիւնը կամք է, քանզի այն արտայայտելու համար անհրաժեշտ է օգտագործել կիրքն իր ամբողջական շարժման մէջ՝ շշուկից մինչեւ խելայեղութիւն*»[5]: Ամբողջացնելով վերոնշեալը կարելի է եզրակացնել, որ հայի հոգին կենսատու է եղել արուեստի համար՝ թէ՛ աշխարհիկ եւ թէ՛ հոգեւոր երաժշտութեան բնագաւառում. «*երկինքն ու երկիրը հաշտեցնող իր երեւակայութեամբը*»[6]՝ ներդաշնակութեան եւ խաղաղութեան ձգտումով. «*բարութիւն, հեզութիւն, խոնարհութիւն, հաւատաւորութիւն, ասոնք մեր ստեղծած սրտառուչ գեղեցկութիւններն են, մեր գերութեան իսկ անդունդէն: Ու կ'ուրանաք, այսքան դժնդակ պայմաններու մէջ, մեր մեծութիւնը այս գեղեցկութեանց ծառայելու: Մենք ենք տուած Մօտ Արեւելքին՝ մեր լրջութիւնը, մեր թախիծը, մեր անմեռ հաւատքը դէպի լոյսն ու դէպի արուեստը*»[7]: Հայն իտիալիստ է, յուզական, եւ որոշակի իմաստով կրում է այս բոլոր համամարդկային գեղեցկութիւնները, հոգեւոր իմաստով դառնալով արժէքաւոր, իսկ ընկերային իրականութեան մէջ՝ անպտուղ: Գուցէ հային յատուկ այս ռոմանտիզմով է պայմանաւորուած նաեւ նրա մեկուսի, մենակեաց կեանքը, այլ կերպ՝ անհատապաշտութիւնը: Այս է հաստատում նաեւ Դէյլիդ Լենգի հետեւեալ եզրակացութիւնը. «*Հայերն ի ծնէ անհատներ են....*»[8]:

Դեռեւս ԺԹ. դարում անհատականի եւ հասարակականի փոխյարաբերութեան մէջ անհատականի գերակայութիւնը հայ հրապարակախօսների մտահոգութեան առարկան էր: Այդ դարի հրապարակախօս, փիլիսոփայ Միքայէլ Նալբանդեանը նշում է. «... *ի՛նչ է ազգը, ի՛նչ է ազգութիւնը, ո՛վ կամի լսել ու հասկանալ, ո՛վ կամի վեր բարձրացնել ցեխի միջից իւր մինչ իսպառ անարգուած ազգը եւ ազգութիւնը. մասնաւորութեան կորստական հոգին վաղուց ահա*

թագաւորել է մեր ազգի անդամների վրայ: Եւ մի՞թէ այդ հոգին չէ պատճառը, այդ դատապարտելի մասնաւորութիւնը, որ մեր ազգը դուրս է ընկել մարդկութեան պատմագրքի տախտակներից. գո՛նէ մեք այլ պատճառ չգիտենք»[9]: Նալբանդեանը յատկապէս շեշտում է այն, որ հայը մշտապէս իր մասնաւոր անձն է առաջ մղում՝ անտեսելով ընկերայինը: Լուսաւորականները միակարծիք են անմիաբանութեան հարցում: Այն ժողովուրդը, որը միասնաբար չի ընտրում իր ապագան, չի զոհում իր մասնաւոր շահը ընդհանուրին, երկար գոյատեւել չի կարող: Իզուր չեն տնտեսական ծրագրերի, փոխատու ընկերութիւնների ստեղծումը, հողի մշակման մասին գրքերը, որոնք նպատակ ունէին հային պահելու իր հայրենիքում եւ այդ հայրենիքը միասնաբար բարեկարգելու: Այլ երկրներում աշխատանք փնտռող, ուսում ստացող տարագիր հայի խնդիրն արդիական էր նաեւ տասնիններորդ դարում: Լուսաւորականները տուեալ խնդրի պատճառը ոչ միայն համարում էին տնտեսական վատ պայմանները, կրթութեան ցածր որակը, այլեւ հայի բնոյթը: Անհրաժեշտ էր փոխել հայի ինքնագիտակցութիւնը կրթութեան, դաստիարակութեան միջոցով: Հայը պէտք է հայրենիքն ընկալէր իբրեւ իրեն պատկանող մի երեւոյթ: Եթէ լուսաւորական շարժման արդիւնքում հայերի որոշակի հատուած միաբանուէր եւ մնար իր երկրում, ապա ե՛ւ տնտեսութեան ե՛ւ գիտութեան ոլորտում շատ տեղաշարժեր կարող էին արձանագրուել: Անկախ կրօնական, քաղաքական, կուսակցական պատկանելիութիւնից, լուսաւորականները միակարծիք են միաբանուելու հարցում: «*Ազգին պինդ մեծ ուժը, միաբանութիւն է, ուր միաբանութիւն կայ, ազգ կայ, ուր միաբանութիւն չի կայ, կամ ազգ չի կայ, կամ չիք ըլլալու մօտ է, ըսել է որ առջի պարտականութիւննիս, ազգասէր ըսուելու համար միաբանութիւն ունենալու է. միաբանութիւն խորհրդոյ բանի եւ գործոյ*»[10]:

Ուստի, յուզականօրէն աշխարհը ճանաչելու, արուեստագէտի ինքնութեամբ այն վերաիմաստաւորելու կարողութիւնը շղթայաբար ձեւաւորում է հայի միւս յատկութիւնը՝ անձնակեդրոնութիւնը: Փորձելով զուգորդել յուզականութիւնն ու անհատակենտրոնութիւնը, ակնյայտ է դառնում այս երկուսի փոխադարձ պատճառական կապը: Աշխարհն անմիջականօրէն ընկալելով՝ հայը նախեւառաջ այն տեսնում է սեփական աչքերով, այնուհետեւ միայն ներառում այլ ազգերի փորձը: Հետեւաբար **ես**ի, անհատականի գաղափարը դառնում է գերակայ:

Ազգը նման է մարմնի, որի կենսականութիւնն ապահովում են բանականութիւնը եւ յուզականութիւնը: Հայի հոգեկերտուածքի առաջին աստիճանը ոգին է. յոյզերի անսահմանութիւն, բանականութեան տկարութիւն: Նկարագրելով բուն հայկական ինքնութիւնը՝ Օշականն անցում է կատարում արեւմտահայ ինքնութեանը: Անցումը վիպական է,

մասնաւորեցուած՝ հազարաւոր դէպքերից մէկով: Ահա Սողոմը, *Մնացորդաց*ի գլխաւոր հերոսը, ծնուել է Արեւմտեան Հայաստանում, համայնքացուել հայկական եւ թուրքական միջավայրում: Մարդկային տեսակով փայլուն գաղափարներ կրող կամ հանճար չէ, որով պէտք է գրաւի ընթերցողի ուշադրութիւնը... Սողոմը յանցագործ է, ով պատիժ է կրում բանտում: Նա հայ է եւ թուրք, որովհետեւ ապրել է նաեւ թուրքական միջավայրում: Այսպէս, Սողոմը հայ լինելուց բացի նաեւ իր ժամանակաշրջանի արտացոլանքն է, Դոստոեւսկու երկու հերոսների կերպարների ամբողջացումը՝ Ռոսկոլնիկովը եւ Իւանը՝ «ոճրագործը» եւ «սատանան»[11]: Թէեւ մարդկային կերպարով Սողոմը այս երկու հերոսների խտացումն է, սակայն գործողութիւնների ընթացքը չի յուշում իմացաբանական առումով ընդվզող եւ հակադրուող ոգու մասին: Նա հայի եւ թուրքի ինքնութիւնների խառնուրդ է, այլ կերպ՝ աշխարհաքաղաքացի, այստեղից ու այնտեղից վերցուած ինքնութեամբ, ով աշխարհը ճանաչել է Արեւմտեան Հայաստանում՝ թուրքական եւ հայկական միջավայրում: Հայկական միջավայր, որը ստուերւում է թուրքական ինքնութեամբ. հայերէնի կողքին թուրքերէն, հայկական երգերի կողքին՝ թուրքական երգեր, հայկական հեքիաթների կողքին թուրքական հեքիաթներ:

Առաջին հայեացքից պարզ թուացող թուարկումը ձեւաւորում է լուսանցքային ինքնութիւն, այլ կերպ շեղուելով բառի բուն իմաստից, կարելի է ասել ինքնութիւն լուսանցքի երկու կողմում: Սողոմը, որպէս արեւմտահայ, իր ծիներով հայկական սահմանում է, Արեւմտեան Հայաստանում, իսկ առօրեայով՝ թուրքական: Միտքը-բանականութիւնը՝ հոգին, ե՛ւ հայկական է, ե՛ւ թուրքական: Եւ բնական է, որ նժարին դրուող ազգային արժէքները չեն կարող լինել աւելի ուժգին, քան կեանքն է, յատկապէս երբ արեւմտահայն ընտելացել է տեսնել Ալլահին երկրպագող թուրքին, գիտի թուրքերէն երգեր, բանաստեղծութիւններ: Նա ինչ-որ իմաստով օտար չէ թուրքական առօրեային: Քանի որ արեւմտահայը կենցաղով թուրքական միջավայրում է՝ անպայմանօրէն կրելու է նաեւ դրա ազդեցութիւնը հոգեկերտուածքի, ինքնութեան մէջ նոր յատկութիւններ աւելացնելու առումով եւ եթէ չկայ ազգայինն իբրեւ հակակշիռ, ապա ժամանակի ընթացքում բուն ինքնութեանը բնորոշ յատկութիւնները փոխակերպման են ենթարկուելու: Օշականը ստեղծում է այս խաբկանքը նախ մեր բանականութիւնը ազատելու համար հային յատուկ առասպելական չափազանցութիւնից եւ շեշտելու, որ Արեւմտեան Հայաստանում ապրող հայերը հասարակ մահկանացուներ են, որոշ իմաստով՝ թուրքական միջավայրին ծանօթ եւ դրան յարմարուած, բայց նրանք ազգի դաւաճաններ չեն: Ճիշտ է, Սողոմը եւ հազարաւոր հայեր, կրելով իրենց ինքնութեան մնացորդները, անցնում են տաճկացման

ճանապարհը, բայց նրանք չեն կարող հայ չլինել: Օշականը Սողոմի տաճկացման ընթացքը ներկայացնում է ազգային ինքնութեան խորհրդանիշերից նրա հրաժարմամբ: Սողոմը նախ ուրանում է հայոց եկեղեցին, ըստ էութեան մերժելով ինքնութեան մէջ գլխաւոր խորհրդանիշը՝ կրօնը, մերժում է իր համայնքը, ինչը ենթադրում է ինքնութեան մի շարք գործօնների ամբողջութիւն՝ լեզու, հոգեկերտուածք, մշակոյթ: Սակայն եւ ոչ մի հարկադրմամբ նա չի կարողանում ուրանալ մօրը՝ իր սկիզբը: Օշականն ինքնութեան մէջ խորհրդանիշերի բացառմամբ յանգում է գլխաւորին սկզբին, որը մերժել, ջնջել ո՛չ մի կերպ չի կարելի: Կարելի է խօսել այլ լեզուով, դառնալ այլ մշակոյթի կրող, դաւանել այլ կրօն, բայց ծինաբանական յիշողութիւնն ունի իր պարտադրանքը եւ այն օրերից մի օր խօսելու է հայերէն, որովհետեւ այլ բան է տիրապետել մէկ այլ ինքնութեանը, *ունենալ* այդ ինքնութիւնը եւ այլ բան է *լինել* այդ ինքնութեան կրողը, կրել՝ դիտել այն որպէս սեփական անձի անքակտելի մաս: Այլ բան է լինելը եւ այլ՝ ունենալը[12]: Այդ է պատճառը նաեւ, որ Սողոմների որդիներն առանց անգամ մէկ հայերէն տառ իմանալու, դարեր յետոյ փնտռում են այն, ինչն իրենց պէտք է ամբողջացնի՝ սկիզբը, սաղմնաւորումը՝ հայկական ինքնութիւնը: Սողոմը տաճկացաւ, բայց գիտակցութեան մէջ ազգայինը բացառման չենթարկուեց, ինչի ապացոյցն է դերսիմահայութիւնը՝ մի փոքրիկ Հայաստան Թուրքիայում:

Հրանտ Դինքը, ով երկու ինքնութիւն կրող հայի փայլուն օրինակ է, նշում է. «*Ես երկու ինքնութեան եւ երկու գիտակցութեան կրող եմ: Առաջինը՝ թուրքաբնակ եմ, Թուրքիայի Հանրապետութեան քաղաքացի... Երկրորդը՝ հայ եմ*»[13]: Նոյնիսկ այս պնդումը փաստում է ինչպիսին է բուն հայկական ինքնութիւնից բացի այլ ինքնութեամբ ապրող հայը: Թուրքական եւ առհասարակ ոչ-հայկական ինքնութիւնը ներկայացնելիս սովորաբար շեշտադրւում է բնակավայրը, որոշակի օրէնքներ ներկայացնող եւ կրող լինելը, իսկ ահա հայկական ինքնութիւնը շեշտելիս նշւում է՝ հայ եմ... Դինքն այս տողերը գրել է *Մնացորդաց* վէպից մօտաւորապէս յիսուն տարի յետոյ՝ դառնալով Օշականի պնդման ճշմարտացիութիւնը փաստող կենդանի օրինակ:

Ինքնութիւնների խճանկարում հայի ինքնութիւնն այլ ազգերից տարբերակելու համար համեմատականներ անցկացնենք նաեւ *Մնացորդաց*ում ներկայացուող թուրքի ինքնութեան հետ: Հայն իր ցեղային յատկութիւններով, կշռոյթով զտարիւն է. հայի ծինաբանական անկրկնելի «տարազ» է, որն ունի սկզբնաւորման պատմութիւն: Կոստան Զարեանի բնութագրմամբ. «Ցեղը ռիթմ է»[14]: Թուրքը զուրկ է ցեղային տարազից, բացակայ է ռիթմով՝ կշռոյթով, սկզբնաւորման պատմութեամբ, չունի ցեղային վեհացումը, ծինաբանական առումով՝

տկար է, գրեթէ զուրկ՝ կենսատու սաղմերից, բայց որպէս ժողովուրդ հոյակապ է. հասարակական կեանքը կառուցարկելիս ունի նախագիծ, որն ընդհանուր է գրեթէ բոլոր թուրքերի համար: Օշականը նշում է. «*Թուրքերը, որոնց մասնագիտութիւնը եղաւ քաղաքակրթութիւնները թաղել, նոր է, որ իրենց ախորժակները կը տարածեն նաեւ ողջ տարրէն դէպի անողջը:...Կ'ըսուի, թէ անոնք մեր երկրին աւերակներն ալ ձեռնարկած են անյայտ ընելու, սկսելու համար նոր իրենց քաղաքակրթութիւնը, մաքուր թուղթի մը վրայէն*[15]:- ապա շարունակում.- *Խայտաբղէտ էր ասոնց տարազը, ամէն աստիճանէ, երանգով՝ ինչպէս որակով*»[16]: Թուրքը ենթագիտակցօրէն ատում է հային եւ այդ ատելութիւնը միակ թուրքինը չէ, այլ՝ բոլորինը: Իր ազգը «վերանորոգելու», վեհացնելու եւ մաքրելու ծրագիրն ընդունում է իբրեւ զինուոր, ով պատրաստ է կատարել բոլոր հրահանգները: Այնինչ, հինգ հայից չորսն անպայմանօրէն պէտք է լինեն զօրավար՝ ունենալով զինուորի կարիք: Իսկ ահա պետութեան իտիալը ենթադրում է «*.....ամբողջի եւ մասերի յարաբերութեան կայունութիւն, այն, թէ պետութիւնն ինչ կարող է ակնկալել* [իր քաղաքացիներից] *եւ որքանով են նրանք պատրաստ իրենք աջակցել պետութեանն իրենց սեփական մղումով եւ ներքին հակուածութեամբ*»[17]: Հայը չի համախմբւում մէկ գաղափարի շուրջ, չունի կեանքի նախագիծ, ի տարբերութիւն թուրքի, որը, որպէս ժողովուրդ, համախմբուած է եւ գերի է հասարակականին: Այստեղից էլ գլխաւոր յատկութիւնը՝ հայն ապահասարակական է եւ ներքին ջանքերն առաւելապէս ուղղում է իր անձին: Թուրքն ապաանձնական է, անկախ համոզմունքներից՝ միաւորւում է գաղափարի շուրջ: Թուրքի համոզմունքը հասարակութեան կայացումն է: Նա աշխարհին ներկայանում է ոչ թէ որպէս անհատ, այլ որպէս ազգ, ինչը հայի պարագայում նոյնը չէ: Հայը քաղաքացի չէ. «*...անոնք հլու թուրքին, անհուն ընդվզում էին իրարու դէմ*»[18]: Ուստի, հայը որպէս ցեղային յատկութիւններ կրող ազգ հոյակապ է, իսկ որպէս ժողովուրդ՝ անպիտան: Յայտնի է, որ ժողովուրդ լինելու գլխաւոր յատկութիւնը մէկ գաղափարի շուրջ համախմբուածութեամբ է արտայայտւում, այլ խօսքով՝ մէկ յոյզը պէտք է դառնայ հազարաւորներինը, ինչը, ըստ Օշականի, բացակայ է մեզանում եւ թուրք փաշայի միջոցով նշում է. «*Չէք խորհիր, որ հարիւր, հազար, տասը հազար հայ, նոյնիսկ խնճոյքի համար, քով քովի չեն կրնար խմբուիլ, առանց իրար ուտելու: ...Ձեր ազգային վէրքը, իրար կործանելու ձեր ձրի անընմբռնելի մոլուցքը*»[19]: Հայկական ինքնութեան տարօրինակութիւնն էլ հենց այն է, որ ծայրայեղ է՝ հերոսներ եւ դաւաճաններ, առանց որեւէ շեղման: Գուցէ ընդոծինների[20] մասին է գրում Օշականը, երբ գրում է հայերի մասին, ովքեր թուրքից էլ ջանասիրաբար վաճառում են իրենց հայրենիքը. վաճառականներ,

հոգեւորականներ, շարքային քաղաքացիներ: Նրանց դիմագիծն անորոշ է, ուստի դժուար է նրանց դասել հայ կամ թուրք ազգի շարքին:

Ինչպէս արեւելահայի եւ արեւմտահայի, այդպէս էլ հայի եւ թուրքի ինքնութեան տարբերութիւնն ակնյայտօրէն ներկայացւում է նաեւ թուրք փաշայի եւ Մաթիկ Մելիքխանեանցի[21] զրոյցում: Ըստ էութեան այս զրոյցն ինքնութիւնների եռանկիւնի է: Մելիքխանեանցը *Մնացորդաց*ի գլխաւոր հերոս Սողոմի հակապատկերն է, արեւելահայ ինքնութեան կրողը: Նա Մոսկուայի Համալսարանի Ատամնաբուժական Բաժանմունքի ուսանող է, եկել է Արեւմտեան Հայաստան իր հայրենիքը փրկելու գաղափարի վեհութեամբ, յեղափոխական է, ծինաբանօրէն եւ մտածողութեամբ՝ հայ: Նա համոզուած է, որ արեւմտահայը քաղաքական ազատութեան կարիք ունի, ուստի «մահ կամ ազատութիւն» նշանաբանի կենսագործումը կարող է լինել փրկութեան միակ ուղին: Մաթիկը կիրթ է, համարձակ, իտիալիստ... մահուան վախը չի կարող ստուերել գաղափարի նկատմամբ նրա հաւատը: Հակադիր կողմում թուրք փաշան է. Մաթիկից ոչ-պակաս տեղեկացուած է գրականութեան, արուեստի, երաժշտութեան մասին, բայց նրան կիրթ անուանել չենք կարող: Օշականը նրբօրէն շեշտում է կիրթ հայի եւ թուրքի տարբերութիւնը: Հայը գաղափարապաշտ է, թուրքը՝ օգտապաշտ: Եթէ Մելիքխանեանցի համար Դոստոեւսկին համամարդկային մտքի գագաթնակէտ է, ով վեր է հանում մարդկային հոգու գոյութենապաշտ ճգնաժամը, ապա թուրք փաշայի համար Դոստոեւսկու գրուածքները միջոց են ռուսական ինքնութեան թերութիւնները կամ քաղաքական ծրագրերը վեր հանելու եւ ապագայում դրանք ռուսների հետ յարաբերութիւններում օգտագործելու համար... Ահա իրար են հանդիպում երկու ինքնութիւնների գագաթները՝ ամբողջացնելով իրենց ազգերի առասպելները, իտիալները եւ արժէքները. թուրք փաշան եւ շղթայակապ արեւելահայ յեղափոխականը: Խօսակցութեան լեզուն ռուսերէն է: Յայտնի է, որ ԺԹ. դարում քիչ չէին ազգի ապագան Ռուսաց Կայսրութեանը վստահողները եւ, պատահական չէ նաեւ, որ Կովկասից եկած երիտասարդը իր հետ էր բերել ռուսական օգնութեան պատրանքը: Օշականը թուրք փաշայի միջոցով զգօնութեան կոչ է անում՝ շեշտելով, որ կը գայ ժամանակ, երբ ռուսը թուրքից վատ կը վարուի հայի հետ, եւ հայը, ով անհասկանալի նրբութեամբ եւ պաշտամունքով է վերաբերում ռուսերէնին եւ ռուսական մշակոյթին, երանութեամբ կը նախընտրի կոչուել ռուս եւ ոչ՝ հայ: *«Հարիւր տարի յետոյ ձեր այդ բարգաւաճ, շէն ժողովուրդէն դժուար թէ գտնուին քանի մը տասնեակ հազար նշոյլեր, այն ալ լեռներու խորը, ու ասիկա՝ առանց դանակի, ասիկա՝ ռուս աղջիկներով: Տոսթոեւսկիով,*

Մոսկուայով, Պագունինով,-[22] եւ ապա աւելացնում...- *ռուսահայերը կէս դար յետոյ պիտի ամչնան հայ ըլլալուն, պարոն յեղափոխական»*[23]:

Հայ յեղափոխականի իտիալն ազատագրուած հայրենիքն է, իսկ թուրք փաշայինը՝ իր պետութեան հզօրացումը: Թուրք փաշան հային տեսնում է որպէս ցեղային արժէքները գերագնահատող, մեծամիտ, անմիաբան ազգ, ով «քեռի ռուսին» է վստահել ապագայի պետութեան ստեղծումը կամ այլ կերպ՝ ազգային նախագծի իրականացումը. «*Մէկ դարու մէջ դուք խաբուեցաք ձեր այդ ռուսէն նոյնքան հանդիսաւոր կերպով ուրիշ անգամ ալ: Ու պիտի խաբուիք վաղն ալ, եթէ առիթ տրուի: Ու կը խաբուիք տակաւին այսօր, աւելի քիչ խոստումներով*»[24]: Սրան հակադրւում է Մաթիկը, հակադրւում ամբողջապէս հաւատալով իր գաղափարների, իտիալների ճշմարտութեանը. «*Հրեցիք զիս աջ ու ձախ, ըստ ձեր աւանդական քաղաքականութեան, խեղդելու համար ազատութեան մեր սրբազան, անտեղիտալի իրաւունքը օդային խորհրդածութեանց հեղեղի մը տակ*»[25]: Թուրք փաշայի երկարաշունչ հայի նկարագրի բնութագրումը ոչ միայն երկմտելու առիթ չտուեց Մաթիկին, այլեւ նա շարունակեց վստահօրէն պնդել, որ ազատութիւնը հայի իրաւունքն է: Ցաւօք, թուրքերը, ի տարբերութիւն հայերի, դիւանագիտօրէն շատ աւելի հասուն են, եւ մինչ հայոց Ցեղասպանութիւնը, շատ լաւ էին ուսումնասիրել հայի հոգեկերտուածքը, թերութիւններն ու առաւելութիւնները, պատմութիւնը, կրօնն ու մշակոյթը: Այս է հաստատում թուրք փաշայի եւ Մաթիկի երկխօսութեան ժամանակ թուրք փաշայի հետեւեալ դիտարկումը. «*Մենք յաղթեր ենք ու դուք ծառայեր: Հինգ հարիւր տարին ձրի չ'անցնիր ժողովուրդներու գլխէն: Այնպէս որ, առանց ձեր լեզուն գիտնալու, կը յաւակնիմ ձեզ ճանչցած ըլլալ շատ աւելի, որքան դուք չէք ճանչնար մեզ*»[26]: Ի տարբերութիւն թուրքի, Արեւմտեան Հայաստանում ապրող հայը գրեթէ ոչինչ չգիտէր նրա մասին: Նոյնիսկ ծայրայեղ իրավիճակում արեւմտահայերն առաջնորդւում էին այն կանխադրոյթով, թէ թուրքերն իրենց բարեկամներն են, չեն կարող վնասել, որովհետեւ դրա համար պատճառներ չկան: Հայկական դիւանագիտութիւնն անվերջ փաստում է դրա բացակայութեան մասին: Հայի ոգին բոցավառւում է կայծակնային արագութեամբ եւ նոյն արագութեամբ էլ հանգչում է: Թուրքը կարող է սպասել դարեր, ուսումնասիրել, հետազօտել եւ ոչնչացնել: Թուրքական դիւանագիտութիւնը քաղցրաբլիթի եւ մտրակի քաղաքականութիւն է: Այն դիպուկ է ներկայացնում Օշականը. սպառնալ, ծեծել, եթէ անօգուտ է՝ խնդրել, արտասուել, սիրաշահել, եթէ այդ էլ անօգուտ է՝ քառատել եւ հրճուել սեփական անզօրութիւնից[27]: Այսպիսի ճակատագիր ունեցաւ նաեւ Մաթիկը, հայի այն ոգին, որն անհնար է կոտրել:

Օշականն առաջադրում է Ցեղասպանութեան պատճառներից միւսը. թուրքը հինգ հարիւր տարի ուսումնասիրել է հայի պատմութիւնը, հոգեկերտուածքը, թերութիւններն ու առաւելութիւնները, մտերմացել է հայի հետ, դարձել նրա «բարեկամը», որպէսզի հասկանայ՝ ինչպէս պէտք է ոչնչացնել նրան: Իսկ հայն այդ հինգ հարիւր տարում միայն մէկ բան սովորեց «*Թուրքիայում աղաւնիներին չեն սպանում*» եւ յամառօրէն կառչած մնաց իր ինքնութեան այդ մնացորդին՝ միամտութեանը եւ պարզամիտ հաւատին: Իսկ ինչպիսի՞ թուրքի պէտք է իրականում ճանաչի արեւմտահայը: Չէ՞ որ երեւոյթը սահմանելիս այն պէտք է դիտարկել *որոշակի* համակարգում եւ *որոշակի* փոխյարաբերութեան մէջ: Ուրեմն, ինչպիսի՞ ինքնութիւն ունի թուրքը հայի հետ յարաբերուելիս: Օշականի *Մնացորդաց*ը թոյլ է տալիս այս հարցին միանշանակ պատասխանել՝ քինախնդրական[28] ինքնութիւն: Թուրքն այդ ինքնութեան կրողն է, ինչ-որ իմաստով ցեղային առումով նուաստ, թոյլ եւ խեղճ. սա է վկայում թուրք փաշայի կերպարը, ով ջանասիրաբար համոզում է, որ թուրքը ազնուացեղ է, բոլոր ժողովուրդներից ամենաբարին, ամենահամբերատարը եւ մեծամիտ հայի կողմից չգնահատուածը եւ չյարգուածը: Սա է վկայում թուրք մայրերի հրճուանքը, ովքեր «*...ափեցին մեր կիները էգ ափելութեամբ մը: Ածականը իմաստ ունի հոս: Ու կ'երգէին մեգերա այդ կիները այդ օրերու արիւնոտ երգը, զոր աշուղին մէկը, անշուշտ թաթխելէ յետոյ իր սազը փասնհինգամեայ տղու մը արիւնին մէջ, հաներ էր դէպի ցեղային զգայութիւն իր զգայութիւնը...*»[29]: Իսկ թուրք փաշան՝ թուրք մտաւորականը, ատում է հային ցեղային ատելութեամբ. նա ինչ-որ իմաստով նուաստացած է զգում իրեն հայի առաջ: Սա է վկայում թուրք փաշայի այն միտքը, թէ հայ յեղափոխականը արդեօք զարմացած չէ՞ իր դիմաց տեսնելով կիրթ թուրքի, չէ՞ որ միայն հայի առաքելութիւնն է լինել կիրթ, զարգացած, հմուտ: Հայ յեղափոխականի ապագայի հայրենիքը քաղաքական ազատութիւնն ու որպէս հետեւանք՝ պետութեան կառուցումն է: Թուրք փաշայի ապագայի հայրենիքը պանթուրքիզմն է՝ իր ցեղի նորոգումը, սրբագրումը եւ հզօրացումը:

Հայի եւ թուրքի ինքնութեան տարբերութիւններն ակնյայտ են ազգի, պետութեան գաղափարների շուրջ: Ի՞նչ էին այս երկու ազգերն ակնկալում ապագայից, ինչպիսի՞ յաւակնութիւններ ունէին, ինչպիսի՞ պետութիւն էին ցանկանում ստեղծել, եւ որո՞նք էին նրանց գործողութիւններն այդ ուղղութեամբ: Հայի պարագայում հնարաւոր է բաւականին պերճախօս լինել անհատական առաքինութիւնները թուարկելիս: Աւելին, կարելի է գովերգել, հպարտանալ, բայց երբ պէտք է խօսել պետութեան իտիալի եւ հայի «ձգտելիք աշխարհի» մասին, բառերն աղքատիկ են դառնում, իսկ բովանդակութիւնը զուսպ եւ

հակիրճ, ի տարբերութիւն թուրքի, որն այս ուղղութեամբ բաւականին պերճախօս է: Մինչեւ ԺԹ. դար օսմանցին եւ թուրքը չտարբերակուող հասկացութիւններ էին, աւելին՝ թուրք լինելը պատուաբեր չէր եւ «*նոյնիսկ պատմութեան մէջ չբացայայտուած անյայտ*», բայց ահա՝ «*Կարճ ժամանակ պահանջուեց, որպէսզի թուրք կոչուելը նախապտինք համարող զինուորները բարձրաձայն գոչեն «Ես հպարտ եմ, որ թուրք եմ»*, սկիզբ դրուեց այնպիսի ազգայականութեան, որի հիմքն ազգային նիհիլիզմն է. ուրիշինը բռնի ժխտելու միջոցով սեփականի հաստատումը[30]: Ժխտելու ճանապարհը սահուն էր, քանի որ թուրք լինել - իրաւացիօրէն շեշտում է Օշականը - նշանակում է ամէն գնով տիրապետել իրաւունքին: Իսկ «նոր թուրքը» մշակոյթը նորոգելուց առաջ, նորոգել էր իր գիտակցութիւնը, Օշականի բառերով՝ ուղեղը:

Ամփոփելով վերը շարադրուածը, պէտք է նշել, որ Օշականի *Մնացորդաց*ը հայի թերութիւններն ու առաւելութիւնները, անցեալն ու ապագան ամբողջացնող պատկեր է, մի ինչ-որ իմաստով մեզ փոխանցուող ազգային «տարազի» ժառանգութիւն, որտեղ թուրքը միջանկեալ, թեթեւակի նշմարուող մի հիւլէ է, հայի ինքնութիւնն անդրադարձնող հայելի: Այո՛, երբեմն պէտք է հարցնել «*Իսկ գիտէ՞ք, թէ ինչ է հայ ժողովուրդը. այդ այն ժողովուրդն է, որը ամբողջ մարդկութեան մէջ ամենախորհրդաւոր պատմութիւնն ունի...*»[31]: Երբեմն պէտք է կանգ առնել այնտեղ, որտեղ աւարտւում է ինքնաձաղկումը եւ ազգային գիտակցութիւնը տեսողութիւն է ձեռք բերում՝ մեղաւորութիւնից, խեղճութիւնից եւ յուսահատութիւնից անկախ: Օշականի *Մնացորդաց*ը փաստում է. հայի ցեղային մաշուածութիւնը գերակայ է թուրքի կարկատած ինքնութեան նկատմամբ: «*...Թուրքը Արեւելքին աղտն է, կեղը, թարախը: Անոր հոգին դեռ աւազներուն չոր արմատներն իսկ անատակ է կենսաւորելու: Անցէք Պոլիսէն մինչեւ Հինտիգուշ, ու՛ր որ կանանչ կայ, ու՛ր որ երկու ծաղիկ աճեր կամ ութ-տասը քար կամարի մտեր, գիտցէք թէ մեր շունչն է կատարողը այդ հրաշքին: Ու մեր շարականները կը պատմեն մեր չմեռնող կենդանութիւնը*»[32]: Օշականը փորձում է տալ ոչ-այնքան երեւոյթի հայելային անդրադարձը, որքան երեւոյթն իր մասնիկայնութեան մէջ, այսինքն՝ երեւոյթն իր տարրերի կառուցուածքով եւ յարաբերութեամբ:

Ընդհանուրից գալով մասնաւորին պէտք է նշել մեր բուն ինքնութեանը բնորոշ յատկութիւնները, որոնք նկատել է Օշականը. աշխարհի ճանաչողութեան իտիալիստական մօտեցումը՝ երաժշտութիւն, բանաստեղծութիւն, ինչին հակադրւում է թուրքի՝ աշխարհը ճանաչելու եւ դրան յարմարուելու նիւթապաշտական մօտեցումը: Աշխարհաճանաչման այս մօտեցումներին էլ համապատասխանում են երկու ազգերի իտիալները՝ պետութեան, ազգի, հայրենիքի նկատմամբ.

հայը քաղաքական ազգ չէ, ինչն իրենից ենթադրում է պետական մտածողութիւն (հասարակական շահի գերակայութիւն), դիւանագիտութեան առկայութիւն, քաղաքական փորձառութիւն, ի տարբերութիւն թուրքի, որը հմուտ է այդ գործում: Թէեւ հայը քաղաքական առումով զիջում է թուրքին, բայց ակնյայտ առաւելութիւն ունի մտաւոր, բարոյական եւ արժէքային մօտեցումներում՝ մշակոյթ, լեզու, կրօն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Յակոբ Օշականն (Յակոբ Քիւֆէճեան, Բուրսա 1883-Հալէպ 1948) իր ժամանակի հանրագիտակ մտածողներից է: Նրա գրչին են պատկանում *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան* բազմահատորեակը (գրականագիտական-վերլուծական հարուստ նիւթ պարունակող մի բացառիկ աշխատութիւն), գրականագիտական, գրաքննադատական, գրական-վերլուծական խորունկ ուսումնասիրութիւններ, նաեւ՝ բաղդատական ուսումնասիրութիւններ (*Ռուգակշիռ Արեւելահայ եւ Արեւմտահայ Գրականութեանց*, խմբ.՝ Պ. Սնապեան, 50ամեակի Հրատ. Թիւ 4, Պէյրութ, Տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, 1999) նաեւ թատրերգութիւններ, գրաքննադատական գործեր, վէպեր, վիպակներ ու պատմուածքներ, որոնք ի մասնաւորի նիւթ ունեն հայ-թուրք յարաբերութիւնների այլեւայլ երեսակները: Օշականը եղել է *Մեհեան* եւ *Բարձրավանք* հանդէսների խմբագիրը: Ցեղասպանութեան տարիներին թուրքական կառավարութեան կողմից ձերբակալուել է, սակայն կարողացել է փախչել, ինչը նա համարում է ճակատագրի պարգեւ: Օշականին են նուիրուած հետեւեալ գործերը. Նշան Պէշիկթաշլեան, *Յակոբ Օշական: Կեանքը եւ Գործը Իրաւ երգիծաբանութիւնով*, Փարիզ, Տպ. Յ. Ֆ. Ճարեան, 1947. նաեւ՝ Գրիգոր Պըլտեան, *Մարտ*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1997. նաեւ՝ Կիմ Աղաբէկեան, *Յակոբ Օշական. Ստեղծագործական Աշխարհի Արահետներում*, Երեւան, Զանգակ-97, 2010. նաեւ՝ Ալբերտ Կոստանեան, *Բացարձակի Որոնում*, Երեւան, Սարգիս Խաչենց, 2004 եւն.:

[2] Օշականի *Մնացորդաց* վէպը գրուել է 1932-1934ին: Այն բաղկացած է երեք հատորից: Առաջին հատորը վերնագրուած է «Արգանդի Ճամբով», երկրորդ հատորը՝ «Արեան Ճամբով» իսկ երրորդ հատորը՝ «Դժոխք»: Այն, ինչպէս նշում է հեղինակը, նպատակ ունի ցոյց տալ բռնապետութեան մէջ արտայայտուող հայկական հոգեբանութիւնը, հայկական մնացորդները փրկելու ձգտումը ինչպէս նաեւ երկու ժողովուրդների ինքնութիւնների բախումը: *Մնացորդաց*ի առանձին հատուածներ նախ հրատարակուել են Գահիրէի *Յուսաբեր*ում, ապա լոյս տեսել ամբողջութեամբ, առանձին գրքով:

[3] Յակոբ Օշական, *Մնացորդաց, Գ Հատոր*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1988, էջ 87:

[4] Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 84

[5] Friderich Nietzsche, *Antikhrist, Rojdenie Tragedii Ili Ellennstvo I Pessimizm*, (Հակաքրիստոս, ողբերգության ծնունդը կամ հելլենականութիւնը եւ յոռետեսութիւնը), Մոսկուա, Աստրէլ Հրատ., 2011, էջ 195-198:

[6] Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 234:

[7] Նոյն, էջ 235:

[8] David Lang, *Armyane Narod-Sozidatel* (Հայերը. արարող ժողովուրդ), Մոսկուա, Ցենտպրոլիգրաֆ, 2004, էջ 32:

[9] Միքայէլ Նալբանդեան, *Հրապարակախօսական Հատընտիր*, Երեւան, Հայաստան, 1979, էջ 32:

10 Ռաֆֆի, *Երկեր, Հտր. 10*, Երեւան, Հայպետհրատ, 1963, էջ 501:

[11] Իւանը ռուս գրող Ֆէոդոր Դոստոեւսկու *Կարամազով Եղբայրներ* վէպի հերոսներից մէկն է: Վէպը գրուել է 1879-80ին: Դոստոեւսկին նպատակադրուել է այս վէպը որպէս «Մեծ Մեղաւորի Պատմութիւնը» վիպաշարի առաջին մաս ներկայացնել, սակայն մահուան պատճառով այդ մտայղացումը չի իրագործուել: Վէպում հեղինակն արծարծում է փիլիսոփայական հարցեր Աստծոյ, ազատության եւ բարոյականութեան մասին: Ռոսկոլնիկովը Դոստոեւսկու *Ոճիր եւ Պատիժ* (հրապարակուել է 1866ին) վէպի հերոսն է: Վէպում ներկայացուում են տուեալ ժամանակի հասարակութեան գոյութենական ճգնաժամը, օտարուածութեան հիմնահարցը եւ դրա ընկալումն ու արձագանգը ստեղծագործ անհատի կողմից:

[12] Լինելու եւ ունենալու հիմնահարցին անդրադարձել է Էրիկ Ֆրոմմը՝ բովանդակային առումով դիտելով այս երկուսը որպէս հակադիր հասկացութիւններ (E. Fromm, *Imet Ili Bit?* (Ունենա՞լ, թէ՞ լինել), Մոսկուա, Պրոգրէս Հրատ., 1990):

[13] Հրանտ Դինք, *Երկու Մօր Ժողովուրդ, Երկու Հեռու Հարեւան*, Երեւան, «Գրափունջ» ՍՊԸ, 2009, էջ 21:

[14] Կոստան Զարեան, *Անցորդը եւ Իր Ճամբան*, Երեւան, Սարգիս Խաչենց, Փրինթինֆօ, 2010, էջ 53:

[15] Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 11:

[16] Նոյն, էջ 21:

[17] Hegel, *Politicheskie Proizvedeniya* (Քաղաքագիտական աշխատութիւններ), Մոսկուա, Նաուկա Հրատ., 1978, էջ 65-66:

[18] Յակոբ Օշական, *Մնացորդաց, Ա. Հտր.*, Անթիլաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1988, էջ 451:

[19] Օշական, *Մնացորդաց, Գ. Հտր.*, էջ 245:

[20] Հին նահապետական տունը, որպիսին եղել է Հայկինը՝ բաղկանում էր հարիւրաւոր մարդկանցից: Սրանց մի մասը բուն Նահապետի արիւնակից էին, նրա մերձաւոր կամ հեռաւոր սերունդները, սրանք են իսկապէս «ազգային օճախ» կազմողները: Սրանց հետ նոյն տանը ապրում էին, իբրեւ մշտական անդամներ՝ օտար արիւնից մարդիկ, որոնք եւս ունէին իրենց սերունդները, բայց տան բուն անդամների իրաւունքը չունէին, ինչպիսիք էին

մշակները, սպասաւորները եւն.: Սրանք են, որ կոչւում են ընդոծին (Մովսէս Խորենացի, *Հայոց Պատմութիւն*, Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 367):

[21] Մաթիկ Մելիքխանեանցն իրական կերպար է, ով եկել էր Արեւմտեան Հայաստան, ազատագրական գաղափարներով: Այն, ինչ նկարագրել է Օշականն իրական հիմք ունի, ընդ որում՝ Մաթիկի եղերական մահը: Օշականն այնքան է տպաւորուել այս կերպարով, որ 1930ականների առաջին կեսէրին առանձին վէպ է գրել *Մաթիկ Մելիքխանեանց* վերնագրով (առանձին գիրքով հրատարակուած Պէյրութ, 2010):

[22] Օշական, *Մնացորդաց, Գ. Հրր.*, էջ 227

[23] Նոյն, էջ 233:

[24] Նոյն, էջ 238:

[25] Նոյն, էջ 282:

[26] Նոյն, էջ 229:

[27] Օշականն անմիջականօրէն, որեւէ ձեւակերպմամբ չի մատնանշում վերոնշեալ դրոյթը, թէեւ թուրք փաշայի եւ Մաթիկի միջեւ ծաւալուած երկխօսութեան բովանդակութիւնը թոյլ է տալիս ամփոփել եւ կատարել նման եզրակացութիւն (Օշական, *Մնացորդաց, Գ. Հրր.*, էջ 221-294):

[28] Քինախնդրականը (resentmental) հոգեւոր եւ ընկերաբանական առումով ստորին աստիճանում գտնուող մարդու կամ ազգի յատկութիւնն է, որը վրիժառութեամբ, թոյնով է լցուած իրենից բարձր գտնուող մարդու կամ ազգի նկատմամբ:

[29] Յակոբ Օշական, *Մնացորդաց, Բ. Հրր.*, Անթիլիաս, Տպ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1988. էջ 331:

[30] Այշէ Հիւր, «Բարբարոս Թուրքից» «Մուսուլման Թուրքը» http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-turkey-ar/from-barbarian-turk-to-muslim-turk-armenian :

[31] Զարեան, *Անցորդը*, էջ 119

[32] Օշական, *Մնացորդաց, Բ. Հրր.*, էջ 141-142:

OBSERVATIONS ON ARMENIAN IDENTITY:
HAKOB OSHAKAN'S *MNATSORTATS* (REMNANTS) NOVEL
(SUMMARY)

MOVSISYAN NANE
monane@yandex.ru

Through insights from Hakob Oshakan's novel, *Mnatsortats* (Remnants) the article sheds light on certain peculiarities of Armenian identity, commonalities with and differences from Turkish identity.

The article compares and contrasts the diverse mindsets and, accordingly, approaches of the Armenian and the Turk regarding homeland and statehood. The author argues that Armenian identity is driven by an idealistic model based on vision and perception, music and poetry, while, on the contrary, a Turk's model of world recognition and adaptation is materialistic.